

զով մը տղոց վզէն կը կախուին :

Պատուոյ Գախալ : — Վրան մօտ մէկ կողմը պէտք է կախել պատուոյ տախտակ մը , մէկալ կողմը սև տախտակ մը . առաջինին վրայ կը գրուին ան աշկերտներուն անունները որ ուսման մէջ յառաջագիմութեամբ ու բարի վարքով երևելի կ'ըլլան : Իսկ տախտակը կրնայ զարդարուն ըլլալ , ու երբոր օտարական մը գայ՝ առջևը կրնան կարդացուիլ քաջերուն անունները : Իսկ սև տախտակին վրայ խոշոր տառերով կը գրէ վարպետը անոնց անունները՝ որոնց վրայ գոհ է իրենց ծուլութեանը պատճառաւ կամ թէ գէշ վարքերնուն համար :

Յօդակ : — Վրան քով պէտք է կախել պզտի տախտակ մը , մէկ կողմը սև՝ մէկալը ճերմակ , կամ մէկ կողմը ԱՅՈ , մէկալը ՈՉ գրուած . երբոր աշկերտ մը հարկաւորութեան տեղէն կուգայ , ճերմակ կողմը կը դարձնէ , երբոր երթայ՝ սև կողմը :

Հ . Մ . Ս

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ



Պետրոս Լիբայ Լոստոֆեան :

Ի բազմարկածեան բաղդ ազգիս մերոյ նկատեալակն հայրենասէր չգիտեմ եթէ և հանդերձեւոց բարեացն և յաջողութեանց յուսով քաջալերիցի՞ այնչափ՝ որչափ անցելոցն յիշատակաւ վտանգից՝ ի սուգ և ի տրտմութիւն պաշարի . և այնչափ ևս դառնագոյն ընծայի աղետիցն յիշատակ , որչափ անօտարագոյնք իցեն փառաւո-

րութեանցն միխթարութիւնք , և վաղանցուկք : Յայս ըմբռնեալ զգաւծումն ողբացին ազգասէրք երկամեայ ժամանակաւ յառաջ և զվախճան Պօղոս պէյի Լոստոֆեան ատենակալ իշխանին Լոգիպտոսի , որ այնչափ փառաւորապէս ազգիս յաջս մերոցն և օտարաց . և ահա մինչև սրբեալ ի ծնօտիցն զայն արտասուս՝ յորդելով յորդեն զնոսին և ի յիշատակ տարաժամ մահուան հարազատին նորա պատուական Պետրոս ամիրայի Լոստոֆեան , որ իւրովք ընտիր ընտիր բարեմասնութեամբք քաջածանօթ էր ամենայն ազգիս , թէպէտ և ընդ օտար աստեղօք պանդխտեալ :

Ենեալ ի ծովահայեացն Օմիւռնիա յամի տեառն 1778 , որդի մեծարոյ առն Յովսէփայ կեսարացւոյ , ընդ եղբօրն իւրում երիցու Պօղոս պէյի մարզեցաւ յառաջ քան զամենայն ի հրահանգս հայրենի բարբառոյս . ապա յօսմանեանն , ի յունականին , յիտալականին և ի գաղղիականին . և զգմիւռնական աչալըջութիւնն ընդ հայկական ուշիմ ճարտարութեան լծորդեալ , և զանազան լեզուացն հմտութեամբ ըստ ժամանակին պիտոյից քաջայարմար առ ամենայն կենցաղականս գտեալ , և մանաւանդ յուսումն վաճառականութեան , յորմտադիւրագոյնս ձգէր ի բնէ , քաջանայր և ի վարժս աշխարհագրական , թուաբանական և տնտեսական գիտութեց . և ի հնգետասան ամաց հասակին երթեալ յարէր ի մեծահաշակ ոմն վաճառական քաղաքին գաղղիացի յազգէ , առ որում զամս հինգ գործնական աշակերտութեամբ վարժէր ի հմտութիւնս հաշուեմատենից և նամակագրութեանց և ազգի ազգի վաճառուց շահաստան քաղաքին՝ որ ամբարանոցն է գոգցես ամենայն բերոց ասիական սահմանացն Տաճկաց և Պարսից :

Յետ այնորիկ քսանամեայ գոլով հասակաւ , և իոհական աշխուժիւք և ժրաջան և գովելի շահասիրութեամբ

զհետ երթեալ մեծախորհուրդ բաղ-
ձանաց մտացն՝ նաւարկեալ ելանէր 'ի
Սրբեստ քաղաք, որ այն ինչ սկսանէր
յայնժամ բարդաւաճել տուրեա-
ռիկ վաճառաշահութեամբ քան զյու-
լովս 'ի նաւահանգստից միջերկրեայ
ծովուն, որք երթալով երթային և
նուազէին յերեսաց անդուլ արշաւա-
նացն Վաղղիացւոց: Եւ զձեռն արկա-
նէր հանձարեղն Պետրոս 'ի վաճա-
ռականութիւն ընդարձակ. և քան
արտաքնովքն ձրիւք աւարտահասակ
կերպարանացն և հեզահամբոյր դի-
մաց՝ իւրով քաղցրախօս և դիւրնտել
բարուք և զգօն պարկեշտութեամբ
և ազնուական գնացիւքն զամենե-
ցուն զսիրտս և զաչս յինքն յանկուցա-
նէր, և յաջողէր յամենայնի: Սակայն
ոչ անադանեաց դաղղիական գոռն
հասանել ունել և զՍրբեստ, և որ անդ
վաճառականք էին ցրուեցան, և մերս
հայկազն վաճառական մեկնեցաւ ընդ
նոսին 'ի Սեննա 'ի մայր քաղաքացն
Բասորիոյ. և զի նուազեալ անկեալ
էին և անդ տուրեառիկ շահուց յա-
ճախութիւնք, նա ուշիմ մտօք բուռն
եհար առ ժամն 'ի չափաւորն և 'ի
զգուշական վաճառականութիւն ա-
կանց պատուականաց, որում և հմուտ
իսկ էր յառաջագոյն:

Իսկ իբրեւ լուեցին մարտք և խռո-
վութիւնք, և Սրբեստ վերստին յԲա-
սորիացիսն դարձաւ, և ծովաչու վա-
ճառաշահութեանց միւսանգամ բա-
ցան դրունք, դարձ արար անդրէն և
Պետրոս ամիրայ յամին 1814. և յայնմ
հետէ և առ յապա ընդ ամս երեսուն
և աւելի ըստ խոհական զգօնութեան
և անխոնջ ժրութեան երիտասարդին
քաջի՝ և դէպք ժամանակին բարե-
պատեհք ձեռնառու եղեն 'ի յաջողու-
թիւն գործոց նորա և 'ի պայծառու-
թիւն անուանն:

Վանգի ընդ այն ժամանակս սկիզբն
լինէր ամբառնալոյ մեծի կուսակալին
Եգիպտոսի Սէհէմմէտ Բըի փաշայի
'ի պարծանս նորոգող և ծաղկեցուցիչ
լինելոյ համբաւատենչ աշխարհին, և

սատարիչ և խորհրդական էր նմա յա-
մենայնի մեծահանձար իշխանն Պո-
ղոս պէյ. և զի Սրբեստ քաղաք քաջա-
դէպ թուէր կուսակալին 'ի բարգա-
ւաճանս վաճառականութեանն Ե-
գիպտոսի ընդ եւրոպական աշխար-
հաց, կարգեաց եղ իւր անդէն գոր-
ծակալ զհարազատն իւրոյ հաւատա-
րիմ ատենակալ իշխանին զՊետրոս
ամիրայ, և 'ի վեր քան զակնկալու-
թիւն իւր խրախ եղև ընդ իրացն յա-
ջողութիւն. մինչև հարիւրաւոր նա-
ւուց յաճախել ամ ըստ ամէ 'ի նա-
ւահանգստէն Բըեքսանդրացւոց 'ի
Սրբեստ քաղաք, ուր յառաջ ժամա-
նակաւ հաղիւ թէ նաւք երկու և
կամ երեք եգիպտացիք երևէին ան-
դանօր:

Եւ ծապէս նպաստ եղեն 'ի ցոյց
մեծի յաջողութեանն և այլ իմն դէպք
իրաց ժամանակին: Վանգի երաշտ
սաստիկ եղեալ ընդ ամենայն Եգի-
պէ յամին 1817, կուսակալն Եգիպ-
տոսի ըստ խնդրոյ Բասորիացւոցն պե-
տութեան առաքեաց թափեաց վաղ-
վաղակի ցորեան բազում հարիւրա-
ւոր նաւուք 'ի Սրբեստ քաղաք, որով
և ևս հռչակեցաւ անուն գործակալին
նորա և յաչս պետութեն Բասորիոյ:
Եւ 'ի միւսում տարւոջ եկաւորեալ
Պրանկիսկոսի Ա կայսեր 'ի Սրբեստ,
զորոյ փոյթ մեծ ունէր նա զլինութեն
և զպայծառութեն, և լուեալ զի մեծ-
անուն վաճառական քաղաքին Եգի-
պտոսի մեծն Պետրոս ունի յիւրում
մթերանոցի անդրիս երկուս Խի-
դեայ դիցն Եգիպտացւոց (զորս համ
բաւեալ հնախոյզն Յովհաննէս Պէլ-
ցոնի հանեալ էր յաւերակաց հնոյն
Եգիպտոսի) և կամի ընծայել նմա
զնոսին, մտադիւր չոգաւ առ նա ընդ
կայսրուհւոյն և ընդ այլս 'ի պաշտօ-
նէից. և յերկարագոյնս խօսակից լեալ
ընդ նմա, և հաճեալ ընդ իմաստու-
թիւն բանիցն՝ ընկալաւ սիրով և ըզ-
պատուական ընծայսն, և անդէն պար-
գեւեաց նմին մատանի ագամանդեայ
ծանրագին՝ ունելով 'ի միջավայրին

զանուն կայսերն ականակուռ դրոշմածիւ : Վաջաբերեցաւ վեհանձն աւիրայն յղել յընծայ կայսերական թանգարանին և այլ ևս նշխարս եգիպտական հնութեանց , ընդ որս յամին 1823 և ձիագետի մի մեծ և նորասքանչ , և ընկալաւ ընդ այնր 'ի կայսերէն ոսկեդրոշմ պատկեր մեծագիր :

Այլ հանգերձ ազնուամիտ առատաձեռնութեամբն առ աւագս՝ ունէր նա սիրտ կարեկիր առ հաւասարակիցսն , և անարգամեծար առ նրւաստս , և գորովական առ ազգակիցսն . և թէպէտ չէ հնար սուղ բանիւ զցոյցս լաւութեանց նորա բովանդակ առաջի առնել , այլ 'ի յիշատակ յապա եկելոցն նշանակեսցուք ինչ ինչ փոքր 'ի շատէ :

Համին 1841 յեղակարծուց իմն նուազութի լինէր դրամոց 'ի Ռրեստ , և սկսան դադարել տուրեւաւր , և բազում վաճառականք 'ի վտանգի կային սնանկութեան և մեծամեծ վնասուց : Խորհուրդ 'ի մէջ առեալ վաճառականացն ժողովոյ՝ յօժանդակութիւն դրամատանն Վենայի եզեն ապաստան . սակայն խուն ինչ էր նպաստն , և 'ի գարման չարեացն անբաւական . և որք միանգամօժանդակելն կամէին՝ ոչինչ նուազ պահանջէին շահս քան զերկոտասան առ հարիւր : Հայնժամ ժամպատեհ համարեալ մերոյ իշխանին 'ի ցուցանել ոչ միայն զմեծանձն ձեռնտուութիւն իւր , այլ և զգգուշաւոր տնտեսութեանն զարդիւնս , եբաց զգանձս իւր առ ամենեսեան որք պէտս ունէին մեծագումար դրամոց , և այնուհետեւ ընդ ամենայն վաճառատունն շրջան առեալ յածէին զաւուրս բազում դրամք նորա և փոխանակագիրք . և ցժողով վաճառականացն տուեալ միանգամայն ֆիորինս հարիւր հազար՝ շահիւ հնգից առ հարիւր , յայտ յանդիման ժողովոյն խոստացաւ ևս ազատաբար՝ զի թէ և այլք ոմանք յօժարեսցին , ասէ , հանգանակել 'ի տուրսն , ես կրկին ևս

յաւելից տալ : Երանչացաւ ժողովն ընդ նախանձ բարերարութեան նորա , և ոչ միայն շնորհակալութեան նամակաւ մեծարէր զնա՝ մեծ և առաջին կոչելով զնա քաղաքացի , այլ և առակ օրինակի առնոյր անշահասէր և անստգիւտ գնացից . որով և յօլով վաճառականաց կողմանցն դրտաւ գերագոյն : Զեր որ 'ի ճոխից սեղանաւորացն Եւրոպայ որ կասկածէր երբէք ընդ հաւատարմութիւն հայկազն վաճառականին . այլ մանաւանդ ամենայն որ փութայր զբարեկամութիւն նորա և զգործակցութի շահել յանձին օգուտ , և կուսակալն Եգիպտոսի նամակագիր առ նա լինելով՝ պարտ անձին վարկանէր շնորհքս ունել նմա սակս հաւատարմութեանն , և յառաջիկայսն իւրախուսէր :

Նոք 'ի մեծի պատուին՝ էր տեսանել յամիրայն Պետրոս կրկին լաւութիւնս չնաշխարհիկս , որովք և զպատիւն յաստոջ պահէր , և միանգամայն արդեամբք գործոցն առնէր յայտ՝ զի կարի իսկ քաջ արժանի էր նա պատուոյն առաւելաւն հանդերձ : Վաճառի միովն հեռի էր ամենեւին 'ի բարձրամտութեանն կարծեաց , և ընդ խոնարհագոյնս 'ի մարդկանէ զիջանելով վարէր՝ ցանգ միօրինակ զչափաւորութիւն իւր պահելով և զընդաբոյսն համեստութիւն . և միւսովն աչալուրջ էր և զգոյշ անչափ՝ առ 'ի չպարանելոյ 'ի խաբս նենգասիրաց , յորոց սակաւուց է զերծանել յայնմ արուեստի . վասն որոյ և դրունք դատաստանաց փակ էին առաջի նորա , և արդարութիւն նորա 'ի բերանս էր ամենեցուն :

Իսկ զինչ զողորմածութենէն ասացից՝ որ ընդ մեծամեծ առաքինութիւն ճոխի առն և մեծատան համարեալ է իրաւամբք : Ի նուազութեան անդ պարենից 1817 ամին տայր նա բաշխել բազում անգամ ժողովրդապետացն և երիցանց 'ի կարօտեալս քաղաքին ցորեան բազում . և 'ի կառոյցս աղքատանոցաց և հիւանդանոցաց և

որբանոցաց հասարակաց 'ի նորակերտ քաղաքին առատապէս հանգանակէր, և առաւել քան զամենեսեան . նա և ողջոյն իսկ տունս ունէր և գերդաստանս աղքատաց, որոց 'ի ծածուկ սահմանեալ և տայր ռոճիկս ամիս յամսոյ և տարի 'ի տարւոյն . և չլայտնեցան տնանկէն գովաբանիցք անուան բարերարին՝ բայց եթէ յետ մահուն՝ հանդերձ ողբով և կականմամբ . զի և չկամէր նա թէ գովեսցի 'ի կենցաղումս վասն գործոցն՝ զորոց 'ի հանգերձեալն ակն ունէր առնուլ զհատուցումն բարի, գիտելով չափ զի « Բարձր 'ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ » :

Տեսաք ապաքէն և 'ի սուղ նկարագրիս զհանճարեղն և զազնուական իշխան, զհաւատարիմ և զարդարն վաճառական, զբարեբարոյ և զողորմած մեծատունն . տեսցուք արդ և զագասէրն ամիրայ, և դարձեալ յորդեսցեն հոսանք արտասուաց ընդ ագասիրացն դէմս :

Այլ շատ համարէր նա ձեռս յանձին հարեալ պարծել 'ի մէջ օտարաց ընդ հայութեանն անուն, զոր այնչափ փառաւորեալն էր իւրով ազնուութեամբ . զի և քաջ 'ի բաց հեռի էր նա 'ի տղայաբարոյ պանծանացն ունայնութենէ, որպէս և 'ի հակառակէ նորին՝ յազգամոռաց և յազգուրացն վատութենէ : Այլ շատ համարէր բանիւ և գրով չափ և եթ 'ի խրախոյս ազգասիրութեան թեւակոխեալ՝ 'ի նոյն զայլս յորդորել՝ հանդերձելոց ինչ յաջողութեանց յուսով հեռաւորաւ . այլ զինչ . ձեռն 'ի գործ առնէր, և իւրովսանն յարդիւնս բարիս զագասիրութեանն ածէր ջան : Օմիւռնացւոցն քաղաք որ ծնան զնա, և որ քաջադէպ դրիւքն և ուշիմ հայկազանցն ասպնջականութեամբ յուսացուցանէր զնա ընդ բարեբոյս պողաբերութիւն իւրոց առատաձեռնութեանց, ցանգ գրաւեալ ունէր զհեռատես և զլայնախորհուրդ միտս մեծոյ ամիրային . սմին իրի 'ի Մեսրոպեանն անուանեալ յառաջադէմ վարժարանի քաղաքին յաւել յիւրոց ընչից թռչակս կարգել վարժապետաց երկուց՝ յուսումն անգղիական և գաղղիարէն լեզուաց . նպաստ եղև և յորդորիչ տպագրութեան հայերէնախօս օրագրոց, և ձեռնտու և յառաջացուցիչ գովելի ջանից նորանոր ընկերութեանց 'ի զարգացումն գիտութեանց 'ի մերում ազգիս . և մեծապէս հոգ յանձին ունէր, զի որ կենդանարար ոգին է այնպիսեաց օգտակար ընկերութեանց, միաբանասէր փոյթն աւետ բարւոյ հասարակաց՝ հեռի 'ի յաջաղանաց և 'ի գրգռութենէ, կանգաղեսցի 'ի նոսա : Յաւել 'ի Մեսրոպեան վարժարանն և տպարան յիւրոց ծախուց, և այլ տառս նորաձոյս նուիրեաց 'ի սուրբն Յակոբ որ յԱրուստաղէմ, և մեծաւ անձկանօք տենչայր տեսանել զնշոյլս տառիցն սփիւռ ճառագայթել 'ի վերայ հոմասեռիցն ցրուելոց, և նախասկիզբն երախայրեօքն սփոփեալ՝ մեծամեծացն յուսով բարեաց խրախանայր : Բրձանք յաւերժ յիշատակի ազգասէր վաճառականին մնացեն յազգիս և իրիւսարմարն Վաճառականութեան և Հաշտեարմարն Պարպիւր, որ 'ի մերոց մամլոց դրոշմեցան նորին ծախիւք . թող զայլ գրեանն որ մեծ և որ փոքր, զորս տայր տպագրել և դիւրագին սփռել կարօտելոց : Այլ որչափ տեսանէր զիղձս իւր 'ի կատարումն բերեալ տակաւ, և զազգիս մերոյ զնորաբողբոջ մանկրտւոյն զեռանդագին յառաջատուիս, և զազգասիրաց յաճախել, և զվարժարանաց ծաղկել, և զայլ ևս ազգի ազգինչանակս ազգասիրութեան մերոցն, ցնծայր բերկրէր յաննախանձ ոգւոյ և յանկեղծաւոր մտաց . և մոռացեալ իմն զհասակին ծանրութիւն և զամացն վերջնոց զտարժանակիր հիւանդութիւնս, ցանկայր և խորհէր իսկ պարապ առնուլ և մեկուսանալ 'ի տուրեառիկ զբաղանացն, և այնուհետև մտադիւրագոյնս ևս խրնամ ունէլ 'ի կատարումն իւրոց վսե-

պեանն անուանեալ յառաջադէմ վարժարանի քաղաքին յաւել յիւրոց ընչից թռչակս կարգել վարժապետաց երկուց՝ յուսումն անգղիական և գաղղիարէն լեզուաց . նպաստ եղև և յորդորիչ տպագրութեան հայերէնախօս օրագրոց, և ձեռնտու և յառաջացուցիչ գովելի ջանից նորանոր ընկերութեանց 'ի զարգացումն գիտութեանց 'ի մերում ազգիս . և մեծապէս հոգ յանձին ունէր, զի որ կենդանարար ոգին է այնպիսեաց օգտակար ընկերութեանց, միաբանասէր փոյթն աւետ բարւոյ հասարակաց՝ հեռի 'ի յաջաղանաց և 'ի գրգռութենէ, կանգաղեսցի 'ի նոսա : Յաւել 'ի Մեսրոպեան վարժարանն և տպարան յիւրոց ծախուց, և այլ տառս նորաձոյս նուիրեաց 'ի սուրբն Յակոբ որ յԱրուստաղէմ, և մեծաւ անձկանօք տենչայր տեսանել զնշոյլս տառիցն սփիւռ ճառագայթել 'ի վերայ հոմասեռիցն ցրուելոց, և նախասկիզբն երախայրեօքն սփոփեալ՝ մեծամեծացն յուսով բարեաց խրախանայր : Բրձանք յաւերժ յիշատակի ազգասէր վաճառականին մնացեն յազգիս և իրիւսարմարն Վաճառականութեան և Հաշտեարմարն Պարպիւր, որ 'ի մերոց մամլոց դրոշմեցան նորին ծախիւք . թող զայլ գրեանն որ մեծ և որ փոքր, զորս տայր տպագրել և դիւրագին սփռել կարօտելոց : Այլ որչափ տեսանէր զիղձս իւր 'ի կատարումն բերեալ տակաւ, և զազգիս մերոյ զնորաբողբոջ մանկրտւոյն զեռանդագին յառաջատուիս, և զազգասիրաց յաճախել, և զվարժարանաց ծաղկել, և զայլ ևս ազգի ազգինչանակս ազգասիրութեան մերոցն, ցնծայր բերկրէր յաննախանձ ոգւոյ և յանկեղծաւոր մտաց . և մոռացեալ իմն զհասակին ծանրութիւն և զամացն վերջնոց զտարժանակիր հիւանդութիւնս, ցանկայր և խորհէր իսկ պարապ առնուլ և մեկուսանալ 'ի տուրեառիկ զբաղանացն, և այնուհետև մտադիւրագոյնս ևս խրնամ ունէլ 'ի կատարումն իւրոց վսե-

մական խորհրդոց :

Այլ աւանդ . մերձեալ էին դարձեալ աւուրք սգոյ ազգասէր սրտից . հարկ էր նոցա արտասուել զանկունն բարերար և բարեւից տնկոյն մեծի , որ 'ի վաղնջական և յանշքացեալ պարտիպի տանս Հայոց զմեծատարած հովանւոյն իւրոյ և զընտիր ընտիր պըտղոցն վայելս բաշխէր ամենեցուն : Նշանաբացաւ խօթութիւնն որ տանջէր զնա յամաց հետէ , և նոր ևս ախտ հիւանդութեանկաւ զնովաւ . մեկնեցաւ 'ի դիւղ ուրեմն՝ զի գուցէ օգոցն փոփոխութեամբ կազդուրեացի փոքր մի . այլ չեղև հնար : Նանեաւ նա զհասանել վախճանին . հայեցաւ 'ի բարձունս առ կարողն ամենայնի և ողորմած , առ վարձահատոյցն արդարութեան իւրոյ և ողորմածութեան , և յամսօրեայ դառն հիւանդութեն զյոյս վստահութե իւրոյ 'ի նա և եթախարսխեալ պնդապէս՝ ցանգ զսաղմոս երգուն ունէր 'ի բերանի զաղերս . “Տէր , հան 'ի բանտէ զանձն իմ , գոհանամ զանուանէ քումմէ ” : Տկարացաւ մարմնովն մինչև 'ի սպառ . այլ զօրացեալ խորհրդովք եկեղեցւոյ սրբոյ և ամենայն քրիստոսական կրօնիցս պատրաստութեամբ՝ կնքեաց զկեանս իւր 'ի հասակի ամաց վաթսուոն և ութից 'ի 10 աւուր ամենան օգոստոսի ըստ նորոյ տումարի , և եթող զիւրսն և զբարեկամս իւր 'ի սուգ և 'ի տրտմութիւն անմխիթար :

Խմբեցաւ քաղաքն ամենայն 'ի հանդէս յուղարկաւորութեան նորա . զի և չէր ոք 'ի քաղաքին որ անմասն ելէալ իցէ 'ի բարերարութեանց նորա , այլ մանաւանդ իբրև զհայր հասարակաց ողբացին զնա ամենեքեան , և մեծաշուք պայծառութեամբ համօրէն բազմութեան քահանայից քաղաքին , ինկովք և մոմեղինօք և խաչազարդ նշանօք տարեալ հանգուցին զնա 'ի մայր եկեղեցւոյն . և յետ երկու աւուրց զմուսեալ զպատուական դիակնն յղեցին շոգենաւու 'ի Օմիւռնիա՝ անդ ամփոփել զնա 'ի հայրենի շիրիմն ,

այս ինքն է 'ի դամբարանի հօր և մօր իւրոյ , որպէս աւանդեալն էր կտակաւ :

Իսկ մեզ պատուելոցս մտերիմ բարեկամութե մեծի իշխանին և քաղցր ընտանութեամբ նորա զամս յուրմս , որպէս և ամենայն ազգասիրաց և համօրէն հայկազանց՝ միակ սփոփանք և մխիթարութիւն 'ի վերայ մեծի տըրտմութեանս այն է , զի ժառանգորդս բարեմասնութեանց իւրոց և առաքիւնութեանցն մեծամեծաց եթող նա զբեռորդին իւր զպատուական Յովսէփ Չէլէպի Եղևուֆեան , և զմօրաքեռորդին իւր զազնիւ զԱբրահամ Լմիրայ Լպրոյեան , որք առ նմա հրահանգեալք և ընդ նորին դրուատելի շաւիղսն ընթացեալք՝ անմահացուցեն անշուշտ զպատուական յիշատակ մեծի ամիրային մերոյ և զազգատոհմի նորա 'ի սիրտս մերոցն և օտարաց , և ըղձից նորա և հասարակաց տացեն լըուսն անթերի :

Հ . Գ . ԱՅՎ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Հին Սենեպեցւոյ հագուստին յեւ :

ՀԱԳՈՒՍՏԸ մարդուս բնաւորութիւնը չփոխեր , բայց կերպով մը յայտնի կ'ընէ : Երբ համար արեւելցոց ծանր բնաւորութիւնը իրենց լայն ու ծանր հագուստներէն ալ կ'իմացուի , ինչպէս որ Լարոպպուցը թեթեւութիւնը , և մանաւանդ Վաղղիացւոյն՝ որ աս ատեններս գրեթէ ամենուն օրինակ եղած են , իրենց ձիգ ու նեղ հագուստներէն ալ կ'երևնայ :

Սենեպեցիք քանի որ արեւելքի հետ առուտուր ու վերաբերութիւն ունէին՝ արեւելցոց ձեւով՝ լայն ու փառահեղ հագուստներ կը հագնէին . երբոր սկսան աւելի Խտալիոյ ուրիշ բնակչացը հետ վարուիլ՝ անոնց ձեւ առին , ետքերն ալ Վաղղիացւոյ հետ ճանչորելով՝ անոնց պէս սկսան հա-